



CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

24 ՅՈՒՆՈՒԱՐ 2013



Ռազմիկ Փանոսեանը
նշանակուած է Հայկական
Համայնքներու բաժանմունքի
տնօրէն

ԼԻԶՊՈՆ – «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութիւնը այսօր յայտարարեց Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի նշանակումը որպէս Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն Լիզպոնի մէջ: Ան պիտի ստանձնէ իր պաշտօնը 1 Փետրուար 2013ին:

Փանոսեան իր դոկտորական ասարտաճառը պաշտպանած է Լոնտոնի Տնտեսութեան եւ Քաղաքական Գիտութեան Դպրոցին մէջ (London School of Economics and Political Science), ուր նաեւ դասաւանդած է: Բազմաթիւ հրատարակութիւններ ունի հայկական նիւթերու վերաբերեալ, ինչպէս նաեւ հայ ազգային ինքնութեան նուիրուած ու մասնագիտական ջերմ գնահատականի արժանացած հատոր մը: Ան լայն փորձառութիւն կուտակած է ասագ կառավարման մէջ, ներառեալ՝ բազմամիլիոն տոլարնոց ծրագիրներու եւ միջազգային զարգացման նպաստներու (grants) պարագային: Երկար տարիներ ծառայած է որպէս Քաղաքականութեան, Ծրագիրներու եւ Ծրագրումի տնօրէն՝ Մոնթրէալ գտնուող գանատական կառավարական կազմակերպութեան մը: Աշխատած է Միացեալ Ազգերու



CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

Կազմակերպութեան Զարգացման Ծրագրին համար: Կը խօսի անգլերէն, ֆրանսերէն եւ հայերէն:

«Կ'ընդունիմ այս պաշտոնը խայտանքով ու խոնարհութեամբ», ըսաւ Փանոսեան: «Ասիկա Սփիւռքի ամենէն կարեւոր պաշտօններէն մէկն է: Պատրաստ եմ շարունակելու իմ նախորդներու աշխատանքը եւ ա՛յլ անելի ամրացնել ու ընդարձակել «Գալուստ Կիւլպենկեան» Հիմնարկութեան գործը՝ կեդրոնացած ու համակարգուած ձեւով, աշխարհասփիւռ հայ համայնքներուն հետ»:

Մարթին Եսայեան՝ Հայկական Համայնքներու բաժանմունքին պատասխանատու հոգաբարձու եւ Հիմնարկութեան հիմնադիր Գալուստ Կիւլպենկեանի թոռնորդին, ըսաւ. *«Մեծ գոհունակութիւն կը պատճառէ ինձի, որ Դոկտ. Փանոսեանը Հայկական Համայնքներու բաժանմունքին տնօրէնը նշանակուած է: Ան բացառիկ փորձառութեամբ կու գայ այս պաշտօնին եւ մեզի կը բերէ անհրաժեշտ միջազգային ու համադրական հեռանկար: Նշանակումը հետեւած է միջազգային փնտրտուքի մը, որուն ընթացքին բազմաթիւ արժանի թեկնածուներ ընդգրկուած էին»:*

Յաւելեալ տեղեկութիւններու համար, հաճեցէք դիմել Elisabete Caramelo -ի:
Հեռաձայն՝ +217 823 320/ 217 823 217, ելեկտրոնային նամակագրութիւն՝
carmenias@gulbenkian.pt

Կայքէջ՝ <http://www.gulbenkian.pt/section24langId2.html>

(Լուսանկաներ տրամադրելի են)